ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի փոփոխվող և լրացվող հոդվածի վերաբերյալ

Հոդված 327. ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից,վարժական հավաքներից կամ զորահավաքներից խուսափելը

(Վերնագիրը լրաց. 16.12.05 ՀՕ-34-Ն)

1. ~~ժամկետային~~ **Պարտադիր** զինվորական կամ այլընտրանքային ծառայության ~~հերթական~~ **հայտարարված** զորակոչից**,** **կամ անցկացվող** վարժական հավաքից ~~կամ զորավարժանքից~~ խուսափելը՝ այդ ~~ծառայությունից~~ **զորակոչից տարկետում ստանալու կամ ծառայությունից կամ վարժական հավաքից** ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում՝

պատժվում է կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը ~~երեք~~ **վեց** տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) իրեն մարմնական վնասվածք պատճառելու կամ հիվանդության սիմուլյացիայի ճանապարհով,

2) փաստաթուղթ կեղծելու կամ խաբեության այլ ճանապարհով՝

պատժվում է կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ ~~մեկից հինգ~~ **երեքից յոթ** տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է ռազմական դրության~~,~~ **կամ** պատերազմի ժամանակ ~~կամ մարտի պարագաներում~~՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված դեպքերում պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափած քսանյոթ (պահեստազորի սպաները՝ երեսունհինգ) տարին չլրացած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե անցել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության, իսկ քսանյոթ (պահեստազորի սպաները՝ երեսունհինգ) տարին լրացած անձը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է շարքային կազմի պայմանագրային զինվորական ծառայողի երկու տարվա աշխատավարձի և հավելավճարների չափով գումարը: Վարժական հավաքից խուսափած անձը ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով վճարել է սահմանված գումարը:

(327-րդ հոդվածը լրաց., փոփ. 16.12.05 ՀՕ-34-Ն)